ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 44-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 23-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի N 37-Ա որոշման N 1 հավելվածում լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վերագնահատված գույքագրման փաստաթուղթը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Դրամական հատկացում կատարելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 17-Ա որոշման 1-ին կետի «գ» ենթակետը ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.5 Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 5-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6 Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասերը առանց մրցույթ, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.8 Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.9. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.10. Ջերմուկ համայնքի 2018 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.11. Հանձնաժողով ստեղծելու և Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող «փոքր» օբյեկտ հանդիսացող «Անտառային ձայներ» սրճարանը որպես Ջերմուկ համայնքի սեփականություն միակողմանի ընդունելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.12. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի N 42-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.13. Ջերմուկ համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			

Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 45-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			

Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-...0..... ձեռնպահ- ...0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 23-ի N-45 Ա որոշման

Օրինակելի ձև Հ-9

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2018թ. - 30.06.2018թ. ժամանակահատվածի համար)

1. Համայնքի անվանումը *Ջերմուկի համայնքապետարան*
2. Փոստային հասցեն *ք. Ջերմուկ Մյասնիկյան 8*
3. Համայնքի տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը *51*
   ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման *210002*
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը _____
5. Համայնքի Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը *90036*
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ *(համայնքի բյուջե՝ 2)*
7. Չափի միավորը *հազար դրամ*

«23» Հուլիսի 2018թ.

Կ.Տ.

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒՆ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ /կիսամյակ/
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ջերմուկ համայնքի 2018 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակում / կիսամյակ/ վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված 206648.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 207735.7 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 100.5 %-ով, իսկ տարեկան ծրագրի նկատմամբ՝ 46.2 %-ով:

Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենք-շինությունների գծով նախատեսված 9115.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 9121.8 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 100.07 %-ով, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 52.3 %-ով:Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով նախատեսված 10860.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 10861.4 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 100.1 %-ով, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 32.3 %-ով:

Հողի հարկ գյուղատնտեսական նշանակության հողերից նախատեսված 2123.0 հազար ՀՀ դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 2123.8 հազար ՀՀ դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 100.04 %-ով, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 24.5 %-ով, Հողի հարկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերից նախատեսված 7861.0 հազար ՀՀ դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 7861.3 հազար ՀՀ դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 100.0 %-ով, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 59.9 %-ով:

Տեղական տուրքերի գծով նախատեսված 2705.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 2707.0 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 100.1 %-ով, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 37.2 %-ով:

Պետական տուրքերի գծով նախատեսված 168.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 290.6 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 173.0 %-ով, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 83.0 %-ով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 49552.0 հազար դրամը և պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացման՝ սուբվենցիայի մասով նախատեսված 2448.0 հազար դրամը հատկացվել է համապատասխանաբար 49757.8 և 2043.7 հազարակա:

դրամներ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 99.6 %-ով, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 49.6 %-ով:

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախատեսված 81988.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 82308.1 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 100.4 %-ով, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 44.0 %-ով:

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար հատկացվել է 6576.5 հազար դրամ:

Վարչական գանձումներից և այլ ոչ հարկային եկամուտներից ստացվող միջոցներից նախատեսված 28231.0 հազար դրամ եկամտի դիմաց փաստացի մուտքը կազմել է 29793.9 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 105.5 %-ով, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 50.4 %-ով:

Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի ծախսային մասով նախատեսած 206648.9 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 206392.9 հազար դրամ, այն կատարվել է 99.9 % -ով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ոլորտին հատկացվել է 51671.3 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 25.0 %-ը:

Պետական բյուջեից ՏԻՄ պատվիրակված լիազորությունների համար ոլորտին հատկացվել է 6699.0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 3.2 %-ը:

Կրթություն և գիտություն / Նախադպրոցական հիմնարկների պահպանման/ ոլորտին հատկացվել է 31830.0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 15.4%-ը:

Մշակույթ, սպորտ , կրոն / արտադպրոցական դաստիարակություն/ ոլորտին հատկացվել է 60008.4 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 29.1%-ը:

Տնտեսական հարաբերությունների գծով ոլորտին հատկացվել է 47651.5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 23.1 %-ը, որից աղբահանություն և սանիտարական մաքրում 36074.9 հազար << դրամ, արտաքին լուսավորվածության ցանցի սպասարկում 8756.3 հազար դրամ, ջրային կառույցների շահագործում 2221.0 հազար դրամ, տրանսպորտ 599.0 հազար դրամ:

Գյուղատնտեսության ոլորտին հատկացվել է 3536.3 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 1.7%-ը:

Սոցիալական պաշտպանություն , գույքի գնահատման ոլորտների համար նախատեսված գումարից հատկացվել է 4996.4 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 2.4 %-ը:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 33.2 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը՝ 15.6 %-ը, սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 50.1 %-ը, սոցիալական նպաստներ բյուջեից հոդվածին ՝ 1.1 %-ը կամ 2380.0 հազար դրամ:

Վարչական բյուջեի մնացորդը 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 1342.8 հազար դրամ:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը բյուջեում արտացոլվում են տնտեսական հարաբերություններ մասում, բացասական նշանով և հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 12107.7 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի ծախսերի 4.1 %-ը կամ 10175.7 հազար դրամն ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, որի միջոցների հիմնական մասը՝ 3425.9 հազար դրամը կամ 33.7 %-ը տրամադրվել է կապիտալ շինարարական աշխատանքներին. 1141.4 հազար դրամ կամ 11.0% կապիտալ վերանորոգման աշխատանքներին : Կապիտալ ծախսերի 5.37 %-ը կամ 5468.4 հազար դրամը ծախսվել է վարչական և տրանսպորտային սարքավորումներ ձեռք բերելու համար, 140.0 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 1.37 %-ը հատկացվել է նախագծահետազոտական ծախսերին:

Ֆոնդային բյուջեի մնացորդը 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 251437.0 հազար դրամ:

Ջերմուկ համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 4289.9 հազար դրամ: Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 4289.9 հազար դրամ:

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 46-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ հունիսի 11-ի N 01.1/10.1/4027-18 գրությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում ձեռք բերված գույքը Ջերմուկ համայնքի գույքացանկում ընդգրկելու, «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին օգտագործման տրամադրելու և ՀՈԱԿ-ի կողմից դրանք շահագործելու (վարձակալության տրամադրելու) դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N 37-Ա որոշման N 1 հավելվածը լրացնել ևս մեկ սյունակով՝ նշելով յուրաքանչյուր գույքի ձեռքբերման տարեթիվը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		

Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

Հավելված N 1
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի
2018թ. մարտի 27-ի N 46-Ն որոշման

Ց Ա Ն Կ

Ավտոտրանսպորտային ծառայության շրջանակներում ձեռք բերված և Ձեզմուկ համայնքի գույքագրանքում ընդգրկվող գույքի

հ/հ	մեքենա-մեխանիզմների անվանումը	Ձեռք բերման տարեթիվը ըստ ընդունման-հանձնման ակտի	միավորի սկզբնական արժեքը /դրամ/	քանակը	վերջնական արժեքը /դրամ/
1	աղբատար մեքենա КО-440-4К1 /ամիաշրջանակ KAMAZ 43253-1011-15/	12.03.2018թ.	22050000	1	22050000
2	ավտոբուսներ VIN կոդ 180004 ՊՍ-10-07	07.03.2018թ.	27300000	1	27300000
3	լիսեռամատոր ЗСО-3Сх site Master	14.02.2018թ.	37571200	1	37571200
4	բազմաֆունկցիոնալ սարքավորում, ԳԼԻԱՍՈՆ 2221.2	15.01.2018թ.	16100000	2	32200000
5	ինքնաթափ ասֆալտի Мешера Е-403	02.02.2018թ.	31492800	1	31492800
6	ծանրատարողության ջրաբաշխիչներ ՍՈՒՊ-2.5	02.02.2018թ.	7000000	1	7000000
7	ասֆալտեղծիչի խառնիչներ ՍՈՒՊ-2.5	15.01.2018թ.	620000	1	620000
8	դասի հանձնաժողովի ՊՈՏ 041 TUKAN	27.02.2018թ.	5055000	1	5055000
9	գրանիտ խոշորի տրոհիչներ АСР 440	15.01.2018թ.	1700000	2	3400000
10	ինքնաթափ մեքենա VIN XT CB11150*1376302 KAMAZ 65115-026	02.02.2018թ.	22050000	1	22050000
11	տրակտորային կցասարքավորումներ	30.03.2018թ.	32500000	1	32500000
12	ինքնագնաց գրեյդերներ տարբերակիչներով	30.03.2018թ.	26000000	1	26000000
13	աղբատար մեքենա	23.04.2018թ.	18000000	1	18000000
14	մինիբուլդոզերներ		12000000	1	12000000
15	հատենեխ ֆրեզերներ, մագ հանող սարքով և տրտորային հնձիչով		1090000	2	2180000
	ԸՆԴԱՄՈՒՆ		260529000	18	279419000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵՊԱՀ ՊԱՇՏՈՆԱՅԻ ՊԵՏ

Ա.ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 47-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 32-րդ ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2018 թվականին վերագնահատված գույքագրման փաստաթուղթը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 23-ի N 47-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

		16.03.2018թ. N -20-Ա որոշում		23. 07.2018թ. N 47-Ա որոշում	
		ընդամենը հաշվեկշռային արժեք		ընդամենը վերագնահատումից հետո	
հ/հ	կազմակերպության անվանումը	հիմնական միջոցներ	արագամաշ առարկաներ	հիմնական միջոցներ	արագամաշ առարկաներ
1	Ջերմուկի համայնքապետարան / Ջերմուկ և Կեչուտ	464,247,541	22,656,516	631,163,576	7,391,770
2	Ջերմուկի համայնքապետարան / Գնդեվազ /	600,399,715	7,514,589	967,568,695	2,681,640
3	Ջերմուկի համայնքապետարան / Հերհեր /	1,010,900	63,200	383,610,000	147,500
4	Ջերմուկի համայնքապետարան / Կարմրաշեն /	2,085,900	30,400	1,450,000	70,500
5	ՔԿԱԳ	8,352,200	32,000	18,227,000	560
6	ՍՕՏԲ	2,051,400	336,000	332,000	43,500
7	Մանկապատանեկան մարզադպրոց	1,834,190	287,176	19,382,000	69,100
8	Հանրային գրադարան	6,766,877	688,250	2,654,000	80,110
9	Ջերմուկ համայնքի ճոպանուղի	1,329,802,970	31,000	928,862,995	-
10	ՋԵԿ ՀՈԱԿ	4,125,984	4,224,640	1,260,000	2,263,000
11	Կ. Ա.Ասրյանի անվան շախմատի դպրոց ՀՈԱԿ,	742,368	471,504	370,000	433,000
12	Արվեստի հ. 1 դպրոց ՀՈԱԿ	58,652,134	1,627,480	109,062,858	1,106,100
13	Արվեստի հ. 2 դպրոց ՀՈԱԿ	61,662,666	2,433,540	60,201,926	1,084,560
14	,,ՋԱՏԻԿ,, մանկապարտեզ ՆՈՒԻ ՀՈԱԿ	190,708,267	11,165,550	305,085,165	1,110,070
15	Գնդեվազ համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ	20,185,500	930,200	45,596,000	116,700
16	ՀՀ Կառավարության հ. 51 որոշում	837,923,730		567,783,858	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	3,590,552,342	52,492,045	4,042,610,073	16,598,110

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 48-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 17-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԻ «Գ» ԵՆԹԱԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին համապատասխան, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ գործուղված և «Ջերմուկի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի անցած բժշկի կողմից բնակության համար վարձակալած բնակարանի վարձակալական վճարը փոխհատուցելու համար՝ Ջերմուկ համայնքի 2018 թվականի վարչական բյուջեից ամսական 50 000 (հիսուն հազար) դրամի չափով դրամական հատկացում կատարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Դրամական հատկացումները կատարելու մասին» N 17-Ա որոշման 1-ին կետի «գ» ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			

Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 49-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2018 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ հաստատելու մասին» N 5-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

որոշման 3-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 3.1 կետ, հետևյալ բովանդակությամբ՝ «3.1 Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի N 29-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 30-րդ կետին համապատասխան Ջերմուկ համայնքի ««ՋԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ում սահմանել արձակուրդում գտնվող աշխատակիցների փոխարինող դաստիարակի և փոխարինող դայակի հաստիքներ՝ պայմանագրային կարգով՝ փոխարինող անձանց վճարման համար նախատեսված հատկացումների սահմաններում:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			

Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 50-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը ավագանու հաստատմանը ներկայացնելու համայնքի ղեկավարի լիազորությամբ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			

Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 51-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Հերհեր գյուղի Հրաբխային խարամի փողոցի N 6 հասցեում գտնվող, 1,24346 հա մակերեսով (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ընդերքի օգտագործման համար տրամադրված) հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Եղբայրներ» ՍՊ ընկերությանը օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի՝ վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ հրաբխային ավազների հանքավայրի օգտագործում , ամսական վարձավճարի չափը՝ 30 000 դրամ, վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 45,6 տարի:

2. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Շլաքահանքի փողոց N 2 հասցեում գտնվող, 0,84718 հա մակերեսով (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ընդերքի օգտագործման համար տրամադրված) հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Արսքար» ՍՊ ընկերությանը օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի՝ վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ բազալտի հանքավայրի և ընդերքօգտագործման թափոնների պաշարների օգտագործում , ամսական վարձավճարի չափը՝ 30 000 դրամ, վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 50 տարի:

3. Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին «Եղբայրներ» ՍՊ և «Արսքար» ՍՊ ընկերությունների հետ կնքելու հողօգտագործման պայմանագրեր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 52-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ** է՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

հողամասի օտարման նպատակը	հողամասի գտնվելու վայրը	մակերեսը, հա	մեկնարկային գինը, դրամ	հողամասի ծածկագիրը	նպատակային նշանակությունը	գործառնական նշանակությունը կամ հողատեսքը
Գյուղատնտեսական գործունեության համար	գյուղ Գնդեվազ	1,54	285 000	10-016-0209-0047	Գյուղատնտեսական	արոտավայր
Գյուղատնտեսական արտադրական օբյեկտ կառուցելու համար	գյուղ Հերիեր, 1-ին փողոց N 19	0,2	445 000	10-028-0012-0005	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների
Հանգստի գոտի կառուցելու համար	քաղաք Ջերմուկ, Մայրաց փողոց N 3/2	1.3	870 000	10-016-0605-	հատուկ պահպանվող տարածքների	հանգստի համար նախատեսված
Հանգստի գոտի կառուցելու համար	քաղաք Ջերմուկ, Մայրաց փողոց N 3/2/2	0,5	335000	10-016-0605-	հատուկ պահպանվող տարածքների	հանգստի համար նախատեսված

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7.... դեմ-.....0.... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 53-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողամասերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակությամբ՝

հողատեսքը	մակերեսը, հա	կադաստրային ծածկագիրը
այլ հողատեսք	0,4543	10-028-0106-0030
այլ հողատեսք	4,24124	10-028-0106-0031
այլ հողատեսք	1,99955	10-028-0106-0034
վարելահող	1,11657	10-028-0106-0029
վարելահող	0,17435	10-028-0106-0033

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հոկտեմբեր 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 54-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	էլեկտրոնային		

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....0.... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

Հավելված 2
Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թ. հուլիսի 23-ի
N 54-Ա որոշման

Ձև 4 | 22ա

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների)

Մարզ | Վայոց Ձոր (անվանումը) | 10 (կոդ)

Համայնք | Ջերմուկ (անվանումը) | 827 (կոդ)

NN	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն, հողատեսք	կոդ N/N	Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6)	Սեփականության սուբյեկտ				
					ՀՀ քաղաքացիներ	ՀՀ իրավաբանական	հանրային քաղաք.	պետական	Օտարերկրյա պետություններ
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող		199.5	197.5		2.0		
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը		166.9	166.9				
1.2.1		այդ թվում պտղատու այգի		129.9	129.9				
1.2.2		խաղողի այգի							
1.2.3		այլ							
1.3		խոտհարք		102.1	101.5		0.6		
1.4		արոտ							
1.5		այլ հողատեսքեր							
1		Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5)		468.4	465.8		2.6		
2.1	2. Ոռոգավայրերի	բնակելի կառուցապատման		120.0	120.0				
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր		120.0	120.0				
2.1.2		այգեգործական (ամառանոցային)							
2.2		ընդհանուր օգտագործման							
2.3		այլ հողեր							
2		Ընդամենը (2.1+2.2+2.3)		120.0	120.0				
3	3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության								
4	4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների								
5	5. Հատուկ պահպանվող տարածքների								
6	6. Հատուկ նշանակության								
7.1	7. Ընդհանրային	անտառ							
7.2		թփուտ							
7.3		վարելահող							
7.4		խոտհարք							
7.5		արոտ							
7.6		այլ հողեր							
7		Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6)							
8	8. Ջրային								
9	9. Պահուստային								
ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9)				588.4	585.8		2.6		

Համայնքի ղեկավար՝ _____ /ստորագրություն, կնիք/

Կատարող՝ _____ /ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 55-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՓՈՔՐ» ՕԲՅԵԿՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՁԱՅՆԵՐ» ՍՐՃԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետի հիման վրա՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի ««Փոքր» օբյեկտները համայնքներին հանձնելու գործընթացը կանոնակարգելու մասին» N 2110-Ն որոշմամբ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով այն, որ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող «փոքր» օբյեկտ հանդիսացող «Անտառային ձայներ» սրճարանը համայնքին հանձնող կողմն անհայտ է՝ այն, որպես Ջերմուկ համայնքի սեփականություն միակողմանի ընդունելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Մարգարյան - համայնքի ղեկավարի տեղակալ

անդամներ՝ Հայկ Դավթյան - համայնքի ղեկավարի խորհրդական

Արմեն Գրիգորյան - համայնքի ավագանու անդամ

Մխիթար Բունիաթյան - համայնքի ավագանու անդամ

Գագիկ Ստեփանյան - համայնքի ավագանու անդամ

Արսեն Գառնիկյան -համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ

Վահե Ղազարյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնումընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 56-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մայիսի 18-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Հերհեր գյուղում գտնվող հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին» N 42-Ա որոշման 1-ին կետում «50 000» թիվը փոխարինել «30 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա՛Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2018թ. N 57-Ն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի կետի 5-րդ ենթակետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 8-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Ջերմուկ համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի եկամտային բաժնում «45-21-00 Տեղական տուրք համայնքի տարածքում արտաքին գովազդի թուլտվության համար» եկամտային հոդվածը պակասացնել 505.2 հազար ՀՀ դրամի չափով՝ հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտի լուծարման գործընթացը, «37-01-00 Ընթացիկ բյուջետային տարվա ֆինանսավորման համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա» եկամտային հոդվածից 666.7 հազար ՀՀ դրամ տեղափոխել «37-03-00 ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում փոխհատուցվող գումարներ» եկամտային հոդված, «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի ծառայություններից օգտվելու համար «46-04-00 վճարովի ծառայությունների մատուցման դիմաց գանձվող վճար» և «46-05-00 տեղական վճարներ» եկամտային հոդվածները համապատասխանաբար ավելացնել 7183.5 հազար ՀՀ դրամ և 4042.0 հազար ՀՀ դրամ: Ընդամենը եկամտային մասը ավելացնել 10720.3 հազար ՀՀ դրամ:

բ) Ջերմուկ համայնքի 2018 թվականի բյուջեի վարչական մասի ծախսային բաժնում «05-01-01-51-աղբահանություն և սանիտարական մաքրում» գործառնական դասակարգմամբ ծախսերի կատարման նախահաշվում «4511-սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական / համայնքային/ կազմակեպություններին» ծախսային հոդվածը ավելացնել 4042.0 հազար ՀՀ դրամ՝հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված աղբահանության ծառայությունների մատուցման նոր պայմանագրերը և համապատասխանաբար նույն գումարի չափով պակասեցնել «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական/համայնքային/ ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածը, նույն գործառնական դասակարգման «4639-այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել - 2874.0 հազար ՀՀ դրամ՝ որպես մեքենա-մեխանիզմների շահագործումից մուտքագրված եկամուտներից

40 տոկոսի մասհանում լրացուցիչ տրանսպորտային ծախսերի, վճարվ աշխատավարձերի ձևակերպման համար: «06.01.01.51-բնակարանային տնտեսություն» «4638 -ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» և «03.02.01.55 - փրկարար ծառայություն» գործառնական դասակարգումներով «4841-բնական աղետներից առաջացած վնասվածքների և վնասների վերականգնում» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար պակասեցնել 920.0 հազար << դրամ և 1083.7 հազար << դրամ:

«6.4.1.51-փողոցային լուսավորվածություն» և «4.5.5.53-խողովակաշարային տրանսպորտ» գործառնական դասակարգումներով «4212-էներգետիկ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 7100.0 հազար << դրամ և 2750.0 հազար << դրամ՝ նախորդ տարիների պարտավորությունները մարելու համար:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով կատարված փոփոխությունների արդյունքում Ջերմուկ համայնքի բյուջեն եկամտային և ծախսային մասերով կազմում է *710716.3 հազար << դրամ*, որից

վարչական բյուջե - 460664.3 հազար << դրամ

ֆոնդային բյուջե - 250052.0 հազար << դրամ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա		
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	բացակա		
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-...0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 հուլիսի 23
Ջերմուկ